

Գալուստ Կիլպէնկեան հիմնարկութիւնը արեւմտահայերէնի զարգացման իր հնգամեայ ծրագրի ծիրին մէջ՝ «ՉԱՐՄԱՆԱՉԱՆ» անունով կրթական աշխատանոցի մը կը ձեռնարկէ, որ նոյն վայրին մէջ պիտի համախմբէ իրար ամբողջացնող երկու ճիւղեր.

- 10էն 15 տարեկան մանուկներուն ուղղուած ամառնային ճամբար մը (Լիոնի «Յագար ու մէկ աշխարհ» ընկերակցութեան հետ գործակցութեամբ), զուարճաւի ու ստեղծագործական միջավայրի մը մէջ, արեւմտահայերէնի գործածութիւնը խրախուսելու նպատակով
- Սփիւռքի ներկայ եւ ապագայ արեւմտահայերէնի ուսուցիչներուն ուղղուած արհեստագիտական վարժընթաց մը (Ֆրանսայի Արեւելեան Լեզուներու եւ Քաղաքակրթութիւններու Ազգային Յիմնարկին հետ գործակցութեամբ), որ պիտի վաւերացուի համալսարանական վկայականով մը

Ամառնային ճամբարին մասնակից մանուկներն ու պատանիները 25 օր տեւողութեամբ՝ փորձառու 15 ուղեկիցներու հետ ներշնչող մթնոլորտի մը մէջ պիտի ապրին: Ամբողջովին թաթխուած արեւմտահայերէն հնչող միջավայրի մը մէջ, պիտի ստեղծագործեն, պիտի յայտնաբերեն, պիտի սորվին եւ պիտի զուարճանան զանազան աշխատանոցներով (երաժշտութիւն, պար, թատրոն, գեղարուեստ) եւ մարզախաղերով: Ասոնց ընդմէջէն՝ լեզուն վերջապէս պիտի դառնայ հաղորդակցութեան եւ ստեղծագործութեան բնական միջոց մը: «Չարմանագան» ճամբարը ներգործութիւններու տարածք մը պիտի մատուցէ, ուր բոլոր մասնակիցները իրարմէ սորվելու եւ ընկերային կապեր հաստատելու առիթը պիտի ունենան, հարստացնող եւ եզակի փորձառութիւն մը ապրելով: Գործնական վարժընթաց մը եւ մասնագիտական դասախօսութիւններ, նորագոյն մանկավարժական մօտեցումներու եւ միջոցներու կիրարկումով: Գործարարական վայրն է՝ Ֆրանսայի Լա Պուրպուլ գիւղաքաղաքը:

Արձանագրութեան դիմումները կատարել նախքան 25 մարտ 2017-ը ժամը 23:00ին՝ Կրինուիչի ժամով:

Յանդիման տեղեկութիւններ ստանալու համար այցելեցէ՛ք՝ www.zarmanazan.com